

դաւանադրին մասին: Սակայն մեր վերը տուած նամակը ցոյց կուտայ որ շատ դառնութեանց կենթարկուի Զուղայեցիին մինչդեռ հոգեւարքի մահճին մէջ էր: Նամակը կը մանրամասնէ այդ դառնութեանց մասին ըսելով: «Իսկ յաւուր կիրակէին, զոր ի վաղիւն աւանդելոց էր դաւադր հոգին (Զուրղայեցիին), յորդորեալ գտածիկ դաւէնիսն (պարտապահանջ դատախազներ), եկեալ ի վերայ սաստիկ հիւանդութեանն, կամէին մահճօք վերցնել ի մէհկեմէն (դատարան): Եւ թէ զինչ չարիք գործեաց յայնմ ժամու՝ ընդ գրով ոչ լինի արկանել, զոր յայնմ սաստիկ հիւանդութեանն չարաչար նորովիւք բանադրեաց զչարն զայն, եւ մեք յեկեղեցւոյն հրապարակագոյժ արարեալ զնորվեալն զայն. զորս ի խոր երեկոյնն առեալ զնոյն տաճիկսն, մինչ հոգեվարի կայր՝ խնդրէր զներսմն, զոր դառնացաւ (Զուղայեցիին) կրկին եւ ոչ հայեցաւ յերեսն, եւ այսպէս վշտակրութեամբ եւ խղճութեամբ աւանդեաց զհոգին»:

Այսպէս դառն ու վրդովեցուցիչ վիճակի մէջ ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի կարենային Հոռոմէադաւան չորս ներկայացուցիչ կղերականներ մուտ գտնել թոհուփոհի մէջ դոնուդ Յակոբ Զուղայեցիի ննջարանը, եւ իբր թէ դաւանադիր մը ձեռք բերել: Սմբողջ կիրակին Վանեցի Նիկողոս չերէցը պարտապահանջ կը կանգնի մեռնող կաթողիկոսին գլխուն, տաճիկ դատախազներու ձեռքով բռնութեամբ կաթողիկոսը իր մահուան անկողինէն հանելով դատարան կ'ուզեն տանիլ, եւ այդպէս կը շարունակեն մինչեւ անոր մահուան պահը, եւ թուղթի շինծու կտորով մը կ'ուզուի հաւատացնել թէ կարելի էր հաւատադարձութեան դաւանադիր մը ստանալ ջղազրգիւ եւ վերդովեալ մեռնող մարդէ մը, որուն շուրջ տարակոյս չկայ որ կային բազմութիւն մը բարեկամներու եւ թշնամիներու:

Գուցէ ըսուի որ միայն ստորագրութիւն մը ձեռք բերելու չափ ժամանակ պէտք էր: Սակայն եթէ ստորագրութիւնըն իսկ իրական ըլլայ ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ ինքնիրմէ ելած մահամերձ ծերունիէ մը առնուած ստորագրութիւնը:

Ձեմ կարծեր որ ոեւէ մէկը պնդէ որ դաւանադիրը Զուղայեցիին գրչութիւնն է, սակայն անտարակոյս կը պընդուի որ ստորագրութիւնը Զուղայեցիինն է:

Արդ այդ ստորագրութիւնը ի՞նչ նշանակութիւն ունի եւ ի՞նչպէս կրնայ տրուած ըլլալ:

Նախ կրնար դաւանադրին տակ ստորագրուած ըլլալ: Յետոյ կրնար ՈՐԵՒԻԹԻՍ թուղթի մը վրայ ՄԻԱՅՆ ստորագրութիւնը ստացուած ըլլալ եւ ՅԵՏՈՅ դաւանադրութիւնը անոր վրան գրուած ըլլալ:

Արդարեւ ստորագրութիւնը դարձանալի ձեւ մը ունի: Նախ իբր թէ դողդոջուն ձեռքէ մը հորիզոնական գիծ մը տողի մը պարագրութիւնը կարծես լեցնելու համար յետոյ ալ երեք չորս տող չափող շեղակի գիծ մը, անորոչ եւ անխմաստ քանի մը իրար խաչաձեւող գիծեր եւ վերջապէս «Ք(րիստոս) ի ծառայ Յակոբ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս»

յամ(ենայն) հայոց»

Դաւանադրին պէս ստորագրութիւնն ալ կեղծ կը թուի:

Յակոբ Զուղայեցիէ ինծի ծանօթ ԻՆՔՆԱԳԻՐ գրչութեանց ձեռագիր ստորագրութիւնը: Հոս մեծցուած չափով ցոյց կուտամ դաւանադրին ստորագրութիւնը եւ ընթերցողէս կը խնդրեմ նկատել նախ ՔԻ ԿԹՂԿՍ եւ ՅԱՍ ի վրայի սղազրական գծիկները: Ուշի ուշով քննեցէք ստորագրութեան «ա»երը, «կ»երը, «ք»երը, «յ»երը եւ պիտի տեսնէք թէ ոչ մէկ ատեն Զուղայեցիի մեր հոս ներկայացուցած երկու նամակներուն մէջ ստորագրութեան այդ գիրերուն նմանը կը գտնուի: Օրինակ, նամակներուն մէջ «յ»երը սկզբնական գլուխ չունին, պոչերը կոր են եւ մաքուր, «կ»երուն վարի ոտքը միշտ ձախ կորացած է, եւայլն եւայլն:

Ստորագրութիւնը լոկ ՔԻ ԾԱՌԱՅ ունի մինչ Զուղայեցիին միշտ ՅԻ ՔԻ ՆՈՒԱՍ ՄԱՍ ԾԱՌԱՅ կը գործածէ:

Սակայն, ինչ որ կարեւորագոյնն է, Զուղայեցիին «յկը» կը ստորագրէ, միշտ սղազրութեամբ, մինչ իրեն վերագրուած դաւանադրին ստորագրութիւնը